



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

29.12.2020թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**  
**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**  
**թիվ ԱՑ-ԼՕ-2020/274**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի  
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե  
Մասնակից՝ «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝  
«ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,  
տնտեսական ապրանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ  
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18229-2020 գրությամբ «Անդրանիկ  
Հարությունյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին  
մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով  
նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

## **1. Գործի նախապատմությունը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 04.12.2020թ. թիվ 1/18-2/76476-2020 գրության հիման վրա, 08.12.2020թ.-ին «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 08.12.2020թ.-ին:

08.12.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/274 համարի ծածկագիրը և հրապարակվել է [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում:

17.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

## **2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 04.12.2020թ. թիվ 1/18-2/76476-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և Անդրանիկ Հարությունյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 05.08.2020թ. կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի Հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել 16 և 18 չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ Գնորդը 09.11.2020թ. Վաճառողի էլեկտրոնային փոստին է ուղարկել համաձայնագրի նախագիծ՝ Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Համաձայն Պայմանագրի 8.13 կետի՝ Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից փասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Նշված պայմանը Վաճառողի կողմից խախտվել է, ուստի նույն կետի համաձայն Պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

### **3. «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 09.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18229-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

### **4. US-LO-2020/274 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-

ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրերով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:

iii. Պատվիրատուն 09.11.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստին ներկայացված ծանուցմամբ ուղարկել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

iv. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

v. Պատվիրատուն 04.12.2020թ.-ին թիվ 1/18-2/76476-2020 գրությամբ Մասնակցին հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 05.08.2020թ. կնքված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով գնման պայմանագրի Հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել 16 և 18 չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

vi. [www.gnumner.am](http://www.gnumner.am) համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 04.12.2020թ.-ին հրապարակված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 8.13-րդ կետի ուժով:

## **5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18229-2020 գրությամբ «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը

պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատակարարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) թիվ 1 Հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Զ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊԶԲ-2020/3-5» ծածկագրերով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների

մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն 09.11.2020թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստին ներկայացված ծանուցմամբ ուղարկել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը: Սակայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի միջև համաձայնագիր չի կնքվել, ինչ մասին Պատվիրատուն 04.12.2020թ.-ին թիվ 1/18-2/76476-2020 գրությամբ հայտնել է Մասնակցին:

[www.gnumner.am](http://www.gnumner.am) համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 04.12.2020թ.-ին հրապարակված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի միջև 05.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ պետական եկամուտների կոմիտե կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 8.13-րդ կետի ուժով:

Վերոգրյալ իրավանորմերի՝ գործով հաստատված փաստերի հետ միասին գնահատման և համալիր վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ դեպքում, «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ի կողմից դրսևորած անգործության՝ թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի կնքվելիք համաձայնագրի նախագիծը չկնքելու և չներկայացնելու արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 04.12.2020թ.-ին միակողմանի լուծել է այն՝ [www.gnumner.am](http://www.gnumner.am) համացանցային կայքում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18229-2020 գրությամբ «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/274 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Անդրանիկ Հարությունյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



**ԼԵՎՈՆ ՕՎԱՆՅԱՆ**